պէտ Յոյնք լուեալ էին խորտակեալ և ընկճեալ 'ի զօրութենէ, այլ Լատինք զօրաւոր յոյժ, զի 'ի սոյն աւուրս դարձեալ էին ճոխ նուիրակունք նոցին, և վրդովեալ անկան այսր եւ անդր. գրեցին առ Բգեչխս Դամասկոսի եւ Աքքէի շրջել զրանն 'ի կամս իւրեանց եւ տալ խափանել զհրովարտակն, հանին և յատուկ սուրհանդակ 'ի Կոստանդինուպոլիս, զի այլ և այլ պատճառանօք հնարս գտցեն հակառակելոյ Հայոց, թէպէտ նոքա զգուշանային 'ի Դուռն։ Եւ Պօղոս եպիսկոպոս ոչ երկնչէր 'ի շարժմանէ սոցա, այլ խորհէր. զի այս անակնուելի գործ բաղում դրրամոց պէտս ունէր, զի այլազգիք ոչ այլ ինչ գիտէին, բայց միայն դրամ եւ զամենայն ինչ առնէին ըստ կամաց իւրեանց իբր համաձայն օրինաց Շէրիի, այլ արծաթն դիւրաւ շրջէր զմիտս նոցա, զի բարւոք գիտէին թէ վանականք Երուսաղէմի, բաց 'ի Հայոց, զմիմեանս խորտակել եւ նուաճել ջանային, մանաւանդ Լատինք, որ հնարիւք պատրաստեալ էին կեղծ և շինծու Հէօճէթթս վասն դրան Բեթղեհէմի, որ 'ի ժամանակի փակման նորին ոչ կարացին մատուցանել, այժմ իբրև գտեալ զայն, պատրաստեալ են 'ի վէճ և բանալ զդուռն, զի յաւուրց անտի փակելոյ զհետ մտեալ անդադար աշխատէին, մանաւանդ յայսոսիկ յերկուս ամս 'ի գալստեան Բգեչխից, պնդէին թէ դուռն այն ոչ է նորասահման, այլ հրամանաւ, ցուցանելով զգտեալ դիրն եւ ստիպէին բանալ զայն։ Նոքին իբրի գրեաց Պօղոս առ Զաքարիա վարդապետ, հանել հրովարտակ ըստ վճռոյ Դենպեսին, զի 'ի մատուցանել Լատինաց հին կամ նոր գրեանս, անընդունելի լիցի, գիր և պատուէր առ Դատաւորն, զի մի ունկն դիցէ բանից Լատինաց, զի անհամար գումարս դրամոց վատնեալ էին Հայք վասն այնր։ Պօղոս եպիսկոպոս երկնչէր, գուցէ 'ի ժամանել հրովարտակին միայն պատարագելոյ հրաման տացեն, և զենդիր բաժանորդութեան երկարեսցեն, որոյ վասն գրեաց ցուցակ ինչ առ Զաքարիա, այլ ոչ օգնէր այն առանց Իլամի և Հէօճէթթի, զորոց ունիմք գրել զկնի, զի Գերեզմանն Քրիստոսի իբր միայն Լատինաց յատկացեալ էր և նոքա եղեալ էին պատկեր, տալա կիսարաժին եղեն ընդ Յունաց, այժմ հարկ էր լինել երեք բաժին։ Հուսկ ուրեմն հասին գրեանքն 'ի Դա-